HEINRICH BÖLL STIFTUNG

ՊԱՅՔԱՐ ՊԼԱՍՏԻԿՈՎ ԳԼՈԲԱԼ ԱՂՏՈՏՄԱՆ ԴԵՄ —

ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ



ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Պլաստիկով ազդո

Պլաստիկով աղտոտումը գլոբալ մարտահրավեր է: Ամեն րոպե մեր օվկիանոսներ է արտանետվում բեռնատարի թափքի տարողության չափ պլաստիկ: Մինչև այժմ արտադրված պլաստիկի մեծ մասը կուտակվում է աղբավայրերում, էկոհամակարգերում և շրջակա միջավայրում, քանի որ պլաստիկի միայն 10 տոկոսից պակասն է արդյունավետորեն վերամշակվում[1]: Ամեն տարի մոտավորապես 19-23 միլիոն տոննա պլաստիկ է հայտնվում ջրային էկոհամակարգերում՝ լուրջ վնաս հասցնելով կենսաբազմազանությանը, մարդու առողջությանը և կենսամակարդակին: Հաշվի առնելով այս մասշտաբը՝ 2022 թվականի նոյեմբերին բանակցություններ սկսվեցին միջազգային համաձայնագրի վերաբերյալ, որով կկասեցվի պլաստիկ թափոնների ահռելի հոսքը: Ներկայումս պլաստիկով աղտոտման վերաբերյալ միջազգային համաձայնագրի շուրջ բանակցությունները դեռ շարունակվում են, ինչն արտացոլում է թե՛ ճգնաժամի հաղթահարման հրատապությունը, թե՛ պլաստիկի արտադրության սահմանափակումների հարցում առկա տարաձայնությունները: ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը զգուշացնում է, որ պլաստիկ թափոնների հետ կապված բնապահպանական, սոցիալական, տնտեսական և առողջապահական ռիսկերն այժմ նույնքան լուրջ են, որքան կլիմայի փոփոխության, էկոհամակարգերի կորստի և բնական ռեսուրսների շահագործման ռիսկերը:

Շատերը, այդ թվում՝ քաղաքականություն մշակողները, գնալով ավելի են գիտակցում պլաստիկ թափոնների կործանարար հետևանքները: Բայց ինչ կապ ունի սա գենդերային անհավասարության հետ: Որքանով է տարբեր սեռերի և գենդերների վրա պլաստիկ թափոնների ազդեցությունը: Ինչու՞ է պլաստիկով աղտոտման խնդիրը մեծացնում գոյություն ունեցող անհավասարությունը և խտրականությունը:

Պլաստիկով աղտոտումը փոխում է մեր կենսատարածքները և թուլացնում էկոհամակարգերի՝ կլիմայի փոփոխություններին հարմարվելու կարողությունը: Ավելին՝ այն բացասաբար է ազդում միլիոնավոր մարդկանց կենսապայմանների վրա: Հետևաբար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել աշխատանքի բաժանմանը, հատկապես՝ կանանց և տղամարդկանց միջև: Ամբողջ աշխարհում ընտանիքի բարեկեցության պահպանումն ավելի շատ կանանց, քան տղամարդկանց ուսերին է: Սակայն այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են հողը, ջուրը և վարկային միջոցները, ավելի անհասանելի են դառնում կանանց համար: Սա ազդում է նրանց աշխատանքի վրա ոչ միայն գյուղատնտեսության և ձկնորսության, այլև արդյունաբերության, մանրածախ առևտրի և ոչ ֆորմալ տնտեսության ոլորտում: Վարելահողերի կորուստը, ինչպես նաև ջրային գոտիների և առափնյա տարածքների աղտոտումը ուղղակի, երբեմն էլ գոյաբանական վտանգ են կանանց համար:

Այսուհանդերձ, սոսկ վիճակագրությունը չի արտացոլում պլաստիկով աղտոտման հարուցած ճգնաժամի և նորանոր ավերածությունների մասշտաբն աշխարհում: Մենք տեսնում ենք պլաստիկե այսբերգի գագաթը միայն: Պլաստիկ թափոնները խնդիրներ են առաջացնում իրենց ամբողջ «կենսացիկլի» ընթացքում:

Երկար ժամանակ է, ինչ բնապահպանական կազմակերպությունները և «Ազատվե՛ք պլաստիկից» գլոբալ շարժումը կոչ են անում բացահայտել և կանխարգելել

ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԸ ԱՄԲՈՂՋ **ԱՇԽԱՐՀՈՒՄ** ԱՐԴԵՆ ԱՐՏԱԴՐՎԵԼ Է ՄՈՏ **12.5 ՄԻԼԻԱՐԴ** ՏՈՆՆԱ ՊԼԱՍՏԻԿ, ԵՎ ԱՅՍ ԹԻՎԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՃԵԼ: ԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ **ՄԵԿ ՇՆՉԻՆ** ԲԱԺԻՆ Է ԸՆԿՆՈՒՄ **1.5 ՏՈՆՆԱ** ՊԼԱՍՏԻԿ: ԱՅԴ ԾԱՎԱԼԻ **ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՍՆ** ԱՐՏԱԴՐՎԵԼ Է ՎԵՐՋԻՆ **25 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ**.

ԱՅՍ ԱՃԸ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԼԱՍՏԻԿԻ (**ՀԱՆԱԾՈ ՀՈՒՄՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ**) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՄԲ, ՄԻՆՉԴԵՌ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (**ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ**) ՊԼԱՍՏԻԿԸ ԿԱԶՄՈՒՄ Է ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ՄԻԱՅՆ **ՉՆՉԻՆ** ՄԱՍԸ:

Ծանոթագրություն. Հայնրիխ Բյոլ հիմնադրամը գենդերը դիտարկում է որպես բազմաշերտ հասկացություն, որը ձևավորվում է խաչաձևվող իշխանական հարաբերությունների արդյունքում: Այս համատեքստում «կանայք» եզրը գործածվում է որպես ներառական սոցիալական կատեգորիա: Թեև այս փաստաթուղթը հիմնված է գենդերային բինար համակարգի վրա, հաշվի է առնվում այն հանգամանքը, որ բազմազան և փոփոխվող գենդերային ինքնություն ունեցող անձինք բախվում են խտրականության և սպառնալիքի անսովոր, հաճախ՝ սաստիկ դրսևորումների, որոնք դեռևս բավականաչափ ուսումնասիրված չեն:

1 *2020 թվականից հետո ներկայացված բոլոր ցուցանիշները կանխատեսումներ են, քանի որ փաստացի տվյալները սահմանափակվում են 2020 թվականով (տես R. Geyer et al., 2024: https://www.science.org/doi/10.1126/science.adr3837).*

աղտոտման գլոբալ ճգնաժամը բացասաբար է
ում հատկապես կանանց և խոցելի խմբերի վրա

ՊԼԱՍՏԻԿԻ ԳԼՈԲԱԼ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՌՈՒՄԸ ԴԱՆԴԱՂԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐ ՑՈՒՅՑ ՉԵՆ ՏԱԼԻՍ: ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԿԱԶՄԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ **500 ՄԻԼԻՈՆ ՏՈՆՆԱ,** ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է, ՈՐ ԱՅՆ ԿԱՃԻ:

մարդկանց և շրջակա միջավայրին սպառնացող այն վտանգները, որոնք առաջացնում են պլաստիկ թափոնները յուրաքանչյուր փուլում, այդ թվում՝ նավթի վերամշակումից ստացվող ռեսուրսների արդյունահանման, արտադրության, օգտագործման, սպառման և մեկուսացման ժամանակ: Քննական վերլուծության ենթարկելով հումքի՝ պլաստիկի վերածվելու բոլոր փուլերը՝ քաղաքացիական ակտիվիստները կարողացել են ի հայտ բերել պլաստիկի արդյունաբերության պատասխանատու կողմերին: Սակայն վերջիններս շեղում են ուշադրությունը՝ մատնանշելով թափոնների կառավարման և վերամշակման ուղղությամբ կատարվող աշխատանքները, որոնք հաճախ փոքրածավալ են և երկրորդական նշանակություն ունեն:

Պլաստիկի կենսացիկլի քննական ուսումնասիրությունը կարևոր է նաև ֆեմինիստական տեսանկյունից, քանի որ պլաստիկ թափոնների խնդիրը չի կարելի սոսկ կապել սպառողական սովորությունների կամ կոսմետիկ ապրանքների մեջ առկա վտանգավոր մասնիկների՝ միկրոպլաստիկների հետ: Ընդհակառակը, այս ցիկլի յուրաքանչյուր փուլ ենթադրում է գենդերային տարբեր փորձառություններ և ազդեցություններ: Պլաստիկի կենսացիկլը բազմաթիվ, այդ թվում՝ գենդերային բնույթի հետևանքներ ունի՝ նավթաքիմիական նյութերից և միկրոպլաստիկից մինչև թափոնների արտահանում և կառավարում:

Մինչ պլաստիկի արտադրությունն արագորեն ընդլայնվում է, իսկ բանակցությունները դեռևս արդյունք չեն տվել, ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ է հասկանալ, որ սոցիալական և գենդերային կառուցվածքային անհավասարությունը թե՛ մեծացնում է խոցելիությունը հնարավոր վտանգներից, թե՛ նոր լուծումների հնարավորություն տալիս: Բնապահպանական լրջագույն խնդիրների արդար և կայուն լուծման բանալին այն բանի գիտակցումն է, որ պլաստիկով աղտոտման ճգնաժամի գլխավոր պատճառներ են հանդիսանում խտրական ինստիտուտները և գենդերային անհավասարությունը, և որ այս ճգնաժամն իր հերթին խորացնում է գենդերային անհավասարությունը:

ԱՄԵՆ ՐՈՊԵ ՄԵՐ ՕՎԿԻԱՆՈՍՆԵՐ Է ԹԱՓՎՈՒՄ **ԲԵՌՆԱՏԱՐԻ ԹԱՓՔԻ ՏԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՉԱՓ** ՊԼԱՍՏԻԿ ԹԱՓՈՆ:





ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ՝ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԱՇՎԻՆ

Պլաստիկները և սինթետիկ մանրաթելերը ստանում են նավթից և գազից: Նավթի արդյունահանմամբ, ապարաշերտի հիդրոճեղքման միջոցով գազի արդյունահանմամբ և այս հանածոների վերամշակմամբ պայմանավորված ջերմոցային գազերի արտանետումները բացասաբար են ազդում կլիմայի վրա: Ներկայումս պլաստիկի արտադրության համար անհրաժեշտ հումքի 99 տոկոսը ստացվում է հանածո վառելիքից:

Բացի այդ, նավթի և գազի հանքավայրերի մշակումը, ինչպես նաև նավթավերամշակման գործարանների կառուցումը խորապես ազդում են տեղական համայնքների, մասնավորապես՝ սևամորթ, բնիկ և թխամորթ բնակչության կենսատարածքի և սոցիալական կառուցվածքի վրա: Կտրուկ արդյունաբերացումը խորացնում է գենդերային անջրպետը՝ լուսանցք մղելով հատկապես այն կանանց, գենդերային և ազգային փոքրամասնություններին, որոնք ներգրավված չեն որոշումների կայացման գործընթացում: Ներկայումս այս միտումները վերագրում են այն զգալի հետընթացին, երբ հանածո վառելիքից կախվածությունը միահյուսված է իշխանության ավտորիտար, գենդերային հավասարությունը բացառող ձևերի հետ՝ մի երևույթ, որին քննադատական խոսույթում հաճախ անվանում են «պետրոմասկուլինություն»:

Հաճախ այս գործարանների և օբյեկտների տեղակայումը կապված է սեռական շահագործման և բռնության հետ: Նավթի արտահոսքից հողային ծածկույթի աղտոտումը զրկում է մարդկանց եկամտի աղբյուրներից, հատկապես՝ այն կանանց, որոնք զբաղվում են գյուղատնտեսական փոքր բիզնեսով, ձկնորսությամբ և առևտրով: Մեթանի և ածխաթթու գազի արտանետումները, ինչպես նաև քաղցկեղածին մի մասնիկները առողջական խնդիրներ են առաջացնում: Համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս փոփոխություններից կանայք անհամաչափորեն ավելի շատ են տուժում՝ լինի դա եկամտի աղբյուրների կորուստ, միգրացիա, թե ընտանիքի անդամներին խնամելու ավելի մեծ պարտավորություն, մինչդեռ որոշ տղամարդիկ կարող են աշխատանքի տեղավորվել հանածո վառելիքի արդյունաբերության ոլորտում:

Աշխարհում նավթի և գազի արդյունաբերության ոլորտում աշխատողների միայն մոտ 23 տոկոսն են կանայք, մինչդեռ վերականգնվող էներգիայի և արևային էներգետիկայի ոլորտներում՝ համապատասխանաբար 32 տոկոսը և 40 տոկոսը, ինչն ապացուցում է ավելի արդար այլընտրանքների առկայությունը, թեև միշտ չէ, որ դրանք երաշխավորված են: Ֆեմինիստական տեսանկյունից էքստրակտիվիզմը (բնական պաշարների շահագործում արտահանման նպատակով) ոչ միայն բնապահպանական մարտահրավեր է, այլև կառավարման, պատասխանատվության և արտատարածքային պարտավորության հարց է, քանի որ ռեսուրսների արդյունահանման սոցիալական և բնապահպանական ծախսերի բեռը շարունակում է ընկնել Գլոբալ Հարավի համայնքների վրա:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Պլաստիկով ազդո

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՏՈՔՍԻՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ



Այսօր անհնար է պատկերացնել աշխարհը առանց պլաստիկի: Խնամքի ծառայություններ մատուցող մարդկանց, հատկապես՝ մեկ կամ մի քանի անձանց ինտենսիվ խնամքով զբաղվողների աշխատանքը թե՛ տանը, թե՛ խնամքի հաստատություններում էապես կախված է պլաստիկի հատկություններից: Տարեցների խնամքի կենտրոնները և հիվանդանոցները, որոնք օրեցօր ավելի ծանրաբեռնված են և նոր աշխատողների կարիք ունեն, չեն կարող գործել առանց մեկանգամյա օգտագործման պլաստիկե այնպիսի պարագաների, ինչպիսիք են ձեռնոցները, տակդիրները, ներարկիչները, խողովակները, ինֆուզիոն տոպրակները և այլն:

Կոշտ և հարվածադիմացկուն, փափուկ և ճկուն, անջրաթափանց և լվացվող, պիտանի մանրէազերծման և վակուումային փաթեթավորման համար՝ պլաստիկի հիմքում մի շարք քիմիական միացություններ են՝ կախված նրանից, թե ինչ ենք ցանկանում ստանալ: Սակայն որոշ առանձնահատուկ հատկություններ ստանալու համար քիմիական հավելումներ են անհրաժեշտ: Այդ հավելումներից շատերը, ինչպիսիք են պլաստիֆիկատորները, նյութին կարծրություն հաղորդող խեժերը, վտանգավոր են առողջության համար: Հորմոնների հատկություններ ունեցող քիմիական նյութերը հատկապես խնդրահարույց են: Էնդոկրին համակարգը խաթարող այս նյութերը անտեսանելի վտանգ են մարդկանց համար, հատկապես՝ աշխատավայրերում: Վերջին ուսումնասիրությունների համաձայն՝ օրեցօր մեծանում է պլաստիկի հիմքում ընկած քիմիական նյութերի ու մասնիկների և վերարտադրողական խանգարումների, քաղցկեղի, նյարդաբանական խնդիրների ու երկարաժամկետ ազդեցության այլ առողջապահական ռիսկերի հետ կապը:

Միևնույն ժամանակ, միջազգային աշխատաշուկայում գենդերային օրինաչափությունների ավելի մանրամասն հետազոտությունը ցույց է տալիս, որ ֆիզիոլոգիական գործոնների և ըստ սեռի աշխատանքի բաժանումով պայմանավորված՝ կանայք ավելի մեծ վտանգի են ենթարկվում: Գենդերային հիերարխիան որպես սոցիալական կոնստրուկտ և ըստ սեռի սեգրեցացված աշխատաշուկան ստիպում են կանանց և խտրականության բազմաթիվ դրսևորումների բախվող մարդկանց ցածր վարձատրվող և վտանգավոր աշխատանք գտնել արդյունաբերական արտադրության ոլորտում, որտեղ քիմիական նյութերի ազդեցությունը մարդու առողջության վրա շատ բարձր է:

Կենսաբանական գործոնները և գենդերը

- Կանանց օրգանիզմում ճարպի պարունակությունն ավելի բարձր է, հետևապես կանայք կլանում են ավելի մեծ քանակությամբ կենսակուտակող և ճարպալույծ քիմիական նյութեր, ինչպիսիք են ֆտալատային պլաստիֆիկատորները:
- Բազմաթիվ կանանց օրգանիզմում տոքսինների նյութափոխանակությունն ընթանում է այլ կերպ՝ ազդելով նրանց նյարդային և սրտանոթային համակարգերի, ինչպես նաև/կամ արյան շրջանառության վրա: Այս գենդերային առանձնահատկությունները միայն վերջերս են հաշվի առնվում և բավականաչափ չեն ուսումնասիրվել:
- Ընդհանուր առմամբ, կնոջ օրգանիզմն ավելի զգայուն է տոքսինների նկատմամբ հորմոնային ակտիվության այնպիսի փուլերում, ինչպիսիք են սեռական հասունացումը, դաշտանը, կաթնարտադրությունը և դաշտանադադարը: Հորմոնների վրա ազդող քիմիական նյութերը կարող են խաթարել օրգանիզմի զարգացումը:
- Ռիսկերը բազմապատկվում են հղիության և կաթնարտադրության ժամանակ, քանի որ վնասակար քիմիական նյութերը փոխանցվում են պտղին կամ նորածնին ընկերքի կամ մայրական կաթի միջոցով: Միկրոպլաստիկ է հայտնաբերվել մարդու ընկերքի հյուսվածքներում, արյան, թոքերի, կրծքի կաթի և այլ օրգանների մեջ: Դրա ազդեցությունը սոսկ բնապահպանական խնդիր լինելուց բացի մարդու առողջությանը սպառնացող վտանգ է:





Թե որքանով է գենդերային անհավասարությունը մեծացնում կանանց խոցելիությունը թունավոր նյութերի նկատմամբ պլաստիկի արտադրության գործընթացում, հատկապես տեսանելի է այն ոլորտներում, որտեղ պլաստիկի առկայությունը դժվար թե կասկածի տեղիք է տալիս: Կանայք շարունակում են գերակշիռ մեծամասնություն կազմել հագուստի համաշխարհային արդյունաբերության մեջ: Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ)՝ լայնորեն շրջանառվող գնահատականի համաձայն՝ այդ ոլորտում կանանց ներգրավվածությունը կազմում է մոտ 80 տոկոս: Նրանց աշխատանքը հիմնականում ունի անկայուն բնույթ, ցածր վարձատրվող է և չի ներառում սոցիալական արտոնություններ: Տեքստիլի արտադրությունը բամբակի հետ կապելը մոլորություն է: Համաշխարհային տեքստիլ արդյունաբերության մեջ գերակայում են սինթետիկ մանրաթելերը. 2023 թվականին միայն պոլիեսթերը կազմել է մանրաթելերի ընդհանուր արտադրության 57 տոկոսը: Տեքստիլի գործարանների աշխատակիցները, որոնց սովորաբար պաշտպանիչ հանդերձանք չի տրամադրվում, ենթարկվում են այնպիսի սինթետիկ նյութերի ազդեցությանը, ինչպիսիք են ակրիլը, նեյլոնը և չափազանց թունավոր ներկերը: Այս ոլորտում անհամաչափորեն ներգրավված, ցածր վարձատրվող և վտանգավոր աշխատանք կատարող կանայք գտնվում են վերարտադրողական տարիքում, ինչը մեծացնում է թունավոր նյութերի ազդեցության հետ կապված ռիսկերը[2]:

2 Գնահատականը հիմնված է ԱՄԿ տվյալների վրա-https://tinyurl.com/4mkmvhd9.

աղտոտման գլոբալ ճգնաժամը բացասաբար է
ում հատկապես կանանց և խոցելի խմբերի վրա

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՍՊԱՌՈՒՄ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ՝ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ

Գենդերային հարաբերությունների անհավասարությունը, ինչպես նաև գենդերային դերերի հիմքում ընկած հասարակական նորմերը ևս պայմանավորում են պլաստիկի օգտագործման առողջապահական ռիսկերի անհավասար բաշխումը: Ամբողջ աշխարհում կանայք շարունակում են կատարել չվարձատրվող խնամքի և տնային աշխատանքներ: Հետևապես, նրանք ավելի շատ են ենթարկվում մաքրող միջոցների վնասակար ազդեցությանը, քան տղամարդիկ: Ավելին՝ աշխարհում մոտ 75 միլիոն տնային աշխատողների մեծ մասը կանայք են, որոնցից շատերը ներգաղթյալներ են: Նրանք աշխատում են դժվարին պայմաններում, առանց աշխատանքային իրավունքների պաշտպանության, ուստի մեծապես ենթարկվում են այնպիսի տոքսինների ազդեցությանը, ինչպիսիք են ֆտալատը, ֆորմալդեհիդը և «հավերժ քիմիկատները»՝ «PFC» և «PFA» նյութերը[3]:

Սոցիալական կոնստրուկտ համարվող և արդյունաբերական ձեռնարկությունների կողմից խրախուսվող գեղեցկության չափանիշները խթանում են կոսմետիկայի և խնամքի միջոցների սպառումը: Բազմաթիվ շուկաներում կանայք շարունակում են համարվել խնամքի և կոսմետիկ միջոցների ավելի ակտիվ սպառողներ, քան տղամարդիկ, ինչի արդյունքում կանայք անհամաչափորեն ավելի խոցելի են էնդոկրին համակարգը խաթարող նյութերի և միկրոպլաստիկի նկատմամբ: Թեև այս ոլորտն ավելի շատ է վերահսկվում, գեղեցկության և հիգիենայի բազմաթիվ պարագաներ, այդ թվում՝ լոգանքի գելը, շրթներկը և մազի լաքը, դեռևս պարունակում են այնպիսի վնասակար նյութեր, ինչպիսիք են ֆորմալդեհիդը, պարաբենը և էնդոկրին համակարգը խաթարող այլ նյութեր: Այդուհանդերձ, այս գենդերային անհամաչափությունը վերանում է, քանի որ կոսմետիկայի արդյունաբերությունը շահույթը մեծացնելու նպատակով ագրեսիվ կերպով թիրախավորում է նոր ժողովրդագրական խմբերի: Մարքեթինգային արշավների և գենդերի վերաբերյալ փոփոխվող ընկալումների արդյունքում Գլոբալ Հյուսիսում տղամարդիկ և տարբեր գենդերային ինքնություն ունեցող անձինք այսօր զգալիորեն ավելի շատ խնամքի միջոցներ են օգտագործում[4]: Թեև սա կարող է ընկալվել որպես դրական սոցիալական փոփոխություն, սա ազդարարում է նաև վնասակար արտադրանքների նկատմամբ անհատի և շրջակա միջավայրի խոցելիության աճի և դրանից բխող ռիսկերի մասին:

ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ **ՄԻՋԱԴԻՐՆԵՐԸ** ՍՈՎՈՐԱԲԱՐ **90 ՏՈԿՈՍՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԵՆ ՊԼԱՍՏԻԿԻՑ** ԵՎ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ՈՐՈՆՔ ԱԶԴՈՒՄ ԵՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ, ԱՅԼԵՎ **ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ** ՎՐԱ: ԱՅՍ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ՀԱՃԱԽ ՈՒՆԵՆ ՍԻՆԹԵՏԻԿ ԲՈՒՐԱՀԱՂՈՐԴԻՉՆԵՐ՝ ԲԱՂԿԱՑԱԾ ՄԻՆՉԵՎ **3,900 ՔԻՄԻԿԱՏՆԵՐԻՑ**, ՈՐՈՆՑԻՑ ՇԱՏԵՐԸ **ՔԱՂՑԿԵՂԱԾԻՆ ԵՆ ԵՎ ՆԵՅՐՈՏՈՔՍԻՆ:** ԱՅՍ ՆՅՈՒԹԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՑՆԵԼ **ՄԱՇԿԻ ԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ**, ԽԱԹԱՐԵԼ ՀՈՐՄՈՆԱԼ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՈՉՆՉԱՑՆԵԼ ՄԱՐԴՈՒ ԷՆԴՈԿՐԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՆԳԵՑՆԵԼ **ՍՐՏԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂՑԿԵՂԻ:**

Դաշտանային հիգիենայի պարագաներ

Պլաստիկի դեմ շարժման մաս կազմող ֆեմինիստ բնապահպանները վերջին շրջանում ահազանգում են մեկանգամյա օգտագործման հիգիենայի պարագաներում տոքսինների հսկայական քանակի մասին: Պլաստիկը հատկապես օգտագործվում է այնպիսի ապրանքատեսակների արտադրության մեջ, ինչպիսիք են հիգիենիկ միջադիրները, որոնք կարող են մինչև 90 տոկոսով կազմված լինել պլաստիկից: Նավթաքիմիական հիմքով պլաստիկում առկա են էնդոկրին համակարգը խաթարող նյութեր, որոնք կարող են արագացնել հորմոններով պայմանավորված քաղցկեղի և այլ չարորակ գոյացությունների զարգացումը: Վիճակագրության համաձայն՝ Գլոբալ Հյուսիսի հարուստ երկրներում կանայք օգտագործում են միջին հաշվով 12,000 դաշտանային հիգիենայի պարագա: Դրանց վնասակար ազդեցությունը թե՛ առողջության, թե՛ շրջակա միջավայրի վրա ահռելի է:

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ԵՄ **28 ԱՆԴԱՄ** ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ **49 ՄԻԼԻԱՐԴ ՄԻԱՎՈՐ** ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԱՇՏԱՆԱՅԻՆ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՊԱՐԱԳԱ՝ ԱՌԱՋԱՑՆԵԼԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ **590,000 ՏՈՆՆԱ ԹԱՓՈՆ: ԱՅՍ ԹԱՓՈՆՆԵՐԸ ՀԱՅՏՆՎՈՒՄ ԵՆ ԱՂԲԱՎԱՅՐԵՐՈՒՄ (87%)** ԿԱՄ **ԱՂԲԱԿԻԶԱՐԱՆՆԵՐՈՒՄ(13%)** ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՏՆՄԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻՆ (ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ՀՈՂԻ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԱՂՏՈՏՈՒՄ, ԱԾԽԱԹԹՈՒ ԳԱԶԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՃ)[5]:

3 PFA՝ պեր- և պոլիֆտորալկիլային նյութեր, PFC՝ պերֆտորածխաջրածիններ:
4 https://www.cnbc.com/2019/05/17/men-are-a-multibillion-dollar-growth-opportunity-for-the-beauty-industry.html.
5 Սրանք այսօր էլ հանդիսանում են ԵՄ-ում տվյալ ոլորտը նկարագրող ամենահաճախ մեջբերվող գնահատականները: Դաշտանային հիգիենայի պարագաների վերաբերյալ ցուցանիշները, որոնք օգտագործվել են սույն փաստաթղթում, շարունակում են մնալ արդիական, քանի դեռ ԵՄ մասշտաբով նոր ամփոփ տվյալներ չկան (տես՝ https://zerowasteeurope.eu/2021/02/why-we-need-a-bloody-manifesto-in-europe/).

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Պլաստիկով ազդո

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԱՐԺԵՇՂԹԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՂԱԿՈՒՄ

Պլաստիկի խնդիրը սերտորեն կապված է սոցիալական անհավասարությունների հետ նաև իր կենսացիկլի վերջին փուլում: Պլաստիկ թափոնների կառավարումը, վերամշակումը և մեկուսացումը հարկավոր է դիտարկել գլոբալ զարգացումների համատեքստում:

Նավթաքիմիական արդյունաբերության ոլորտի վերազգային կորպորացիաները որպես լուծում են առաջ քաշում պլաստիկ թափոնների «վերամշակումը», կամ դրանց տեսակավորումը և վերաօգտագործումը: Այս մոտեցումը կանխում է շահույթի անկումը՝ պատասխանատվությունը բարդելով սպառողների վրա: Այդուհանդերձ, վերամշակման գաղափարը կարևոր նշանակություն է ձեռք բերել աշխարհում պլաստիկի ճգնաժամի հաղթահարման հարցում, քանի որ պլաստիկի 10 տոկոսից պակասն է միայն վերամշակվում: Ավելին՝ ավելի աղքատ երկրներում թափոնների հավաքումը և վերամշակումը եկամտի աղբյուր են հանդիսացել ցածր եկամուտ ունեցող մարդկանց համար, ինչը խորացնում է սոցիալ-տնտեսական և գենդերային անհավասարությունները: Թեև աղբի հավաքումը, տեսակավորումը և վաճառքը գրեթե ամենուր ոչ ֆորմալ զբաղվածության տեսակներ են, տղամարդկանց ավելի շատ է հաջողվում այս ոլորտում ֆորմալ և ավելի բարձր կարգավիճակ ունեցող աշխատանք գտնել: Բացի այդ, որոշ երկրներում ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կանանց հասանելի չեն պլաստիկի՝ ավելի հեշտ վերամշակվող «PET» և «PE» տեսակները[6]:

Գանայում, մասնավորապես, սակավ տեղեկություններ կան պլաստիկի արժեշղթայում ներգրավված աշխատողների մասին, որոնց 61 տոկոսը կազմում են տղամարդիկ, իսկ 39 տոկոսը՝ կանայք: Սակայն նրանց պարտականությունները հավասար բաշխված չեն: Կանայք հիմնականում ընդգրկված են ոչ ֆորմալ տնտեսության մեջ՝ որպես թափոն հավաքող (64 տոկոս) և վերամշակող ընկերություններում՝ որպես թափոն լվացող և տեսակավորող (68 տոկոս): Արժեշղթայի ֆորմալ հատվածում, որն ապահովում է ավելի մեծ պաշտպանվածություն, սոցիալական անվտանգություն և բարձր կարգավիճակ, կանայք կազմում են աշխատուժի թերօգտագործված մասը (12 տոկոս), մինչդեռ տղամարդիկ՝ պլաստիկ արտադրողների և թափոնների կառավարման աշխատուժի 89 և 92 տոկոսը[7]:



Աշխատուժը պլաստիկի արժեշղթայի օղակներում

92% **8%**
թափոնների կառավարում

89% **11%**
պլաստիկի արտադրություն

36% **64%**
թափոն հավաքողներ

32% **68%**
լվացողներ և տեսակավորողներ

6 PE՝ պոլիէթիլեն, PET՝ պոլիէթիլենտերեֆտալատ:

7 Սա ընդամենը մեկ երկրի օրինակ է (https://www.weforum.org/agenda/2021/05/gender-women-plastics-ghana/): Աշխարհի տարբեր երկրներում պլաստիկի արժեշղթայի բոլոր օղակներին առնչվող համեմատական և սեռով տարանջատված ավելի թարմ տվյալները սակավ են, հատկապես՝ ոչ ֆորմալ զբաղվածության, ինչպես նաև թափոնների վերամշակման և կառավարման ոլորտներում ըստ սեռի աշխատանքի բաշխման վերաբերյալ:

աղտոտման գլոբալ ճգնաժամը բացասաբար է
ում հատկապես կանանց և խոցելի խմբերի վրա

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԵՌԱՑՈՒՄ

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՉԵՋՈՔ ՉԷ



Գլոբալ Հարավի և մեկ շնչի հաշվով միջին եկամուտ ունեցող երկրներն արտադրում և մեկուսացնում են ավելի քիչ քանակությամբ պլաստիկ, քան Գլոբալ Հյուսիսի հարուստ երկրները: Սակայն ավելի աղքատ երկրներում համայնքային հողերը և ջրային ռեսուրսներն ավելի շատ են աղտոտված պլաստիկով, ինչը պայմանավորված է թափոնների վերջնական հեռացման կարգավորումների բացակայությամբ և բաց աղբավայրերով: Այս բնույթի համեմատություններում հաճախ անտեսվում է այն փաստը, որ Գլոբալ Հյուսիսի երկրները շարունակում են զգալի ծավալներով պլաստիկ թափոններ արտահանել: Թեև 2021 թվականին ավելի խիստ վերահսկողություն սահմանվելուց հետո պլաստիկ թափոնների համաշխարհային առևտուրը նվազել է, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ երկրները դեռ շարունակում են պլաստիկ թափոններ արտահանել ՏՀԶԿ անդամ չհանդիսացող երկրներ, ընդ որում՝ 2022-2023 թվականներին այդ արտահանումն աճել է 15 տոկոսով:

Կանայք և երեխաները հաճախ իրենց ապրուստը վաստակում են համաշխարհային թափոնային հոսքի ստորին օղակում, մասնավորապես՝ անօրինական աղբավայրերում: Այս վայրերում նրանց կատարած աշխատանքը, այդ թվում՝ մետաղների կորզման նպատակով թափոնների այրումը, ծանր բնույթ ունի, իսկ երկարաժամկետ հատվածում՝ խիստ վտանգավոր է առողջության համար: Այս աշխատանքի ժամանակ արտանետվող գազերը և տոքսինները, ներառյալ՝ ածխածնի մոնօքսիդը, կախված մասնիկները և դիօքսինները հանգեցնում են շնչառական և նյարդաբանական ծանր հիվանդությունների: Պլաստիկի արտադրության և թափոնների կառավարման ոլորտներում աշխատողների համար նախատեսված պաշտպանիչ պարագաները ստեղծվում են հիմնականում տղամարդկանց չափերին և կարիքներին համապատասխան, և հետևաբար անպիտան են կին աշխատակիցների մեծամասնության համար: Ոչ ֆորմալ հատվածում կանայք և երեխաները հաճախ զրկված են նույնիսկ ձեռնոցներից և հասարակ պաշտպանիչ հանդերձանքից: Հարկ է նշել, որ Կահիրեի, Լիմայի, Լուսակայի կամ Սան Պաուլոյի պես խոշոր քաղաքներում ոչ ֆորմալ տնտեսությունում ներգրավված թափոն հավաքողների կատարած աշխատանքը աղբի աճող ծավալների պայմաններում համարժեք է քաղաքային իշխանությունների մատուցած ծառայություններին: Հաշվի առնելով այս աշխատողների կուտակած փորձը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները դիմում են նրանց՝ ապրանքանիշի աուդիտ անցկացնելու, մասնավորապես՝ կատարելու ուսումնասիրություններ, որոնք բացահայտում և դասակարգում են շրջակա միջավայրի համար վնասակար թափոնները: Այդուհանդերձ, միայն քչաթիվ ՀԿ-ներ կան, այդ թվում՝ «Կանայք ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում. գլոբալացում և կազմակերպում» կազմակերպությունը, որ աջակցում են խտրականության տարբեր դրսևորումների բախվող և պարբերաբար ռասիստական, սեքսիստական և սոցիալական ճնշումների ենթարկվող կանանց, որոնք թերահավատ են խտրականության դեմ տարվող քաղաքականության արդյունավետության հարցում:

Եվ վերջապես, վերադառնալով սկզբին՝ պետք է նշել, որ տնային տնտեսությունների և համայնքների պահպանման համար պատասխանատուները հաճախ այն մարդիկ են, որոնք իրենց մաշկի վրա են զգում շրջակա միջավայրի վատթարացման հետևանքները, երբ կարգավորման չենթարկվող պլաստիկի մեկուսացման արդյունքում միլիարդավոր տոննաներով միկրոպլաստիկ և տոքսիններ են արտանետվում՝ աղտոտելով ջուրը, հողը, օդը և կենսաբազմազանությունը:

Դրական նոտայով ավարտելու համար հարկ է ասել, որ այսօր ԵՄ-ն ավելի է խստացրել կանոնները. 2026 թվականի նոյեմբերի 21-ին ուժի մեջ է մտնում դեպի ՏՀԶԿ անդամ չհանդիսացող երկրներ պլաստիկ թափոնների արտահանման արգելքը: Փաթեթավորմանը վերաբերող ԵՄ կարգավորումները, չնայած թերություններին, առաջին կարևոր քայլն են՝ ուղղված փաթեթավորման թափոնների կրճատմանը և հանրային առողջության, բնական ռեսուրսների և կլիմայի պաշտպանությանը: Այս կարգավորումների հաջողությունը կախված է նրանից, թե ԵՄ անդամ երկրները որքան հետևողականորեն կկիրառեն դրանք: Միայն այդ պարագայում հնարավոր կլինի արդյունավետորեն հաղթահարել պլաստիկի ճգնաժամի հասցրած սոցիալական և բնապահպանական լուրջ վնասները:



ՊԼԱՍՏԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ **ՊԱՇՏՊԱՆԻՉ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ** ՍՏԵՂԾՎՈՒՄ ԵՆ **ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՉԱՓԵՐԻՆ** ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՎ ՀԵՏԵՎԱԲԱՐ **ԱՆՊԻՏԱՆ** ԵՆ **ԿԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ** ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

ՔՆՆԱԽՈՒՅԶ ՀԱՅԱՑՔ

Որպես Կանաչների գլոբալ քաղաքական շարժման մաս՝ Հայնրիխ Բյոլ հիմնադրամը իր եվրոպական և միջազգային գործընկերների հետ միասին սկսել է հակազդել պլաստիկի ճգնաժամին դեռևս COVID-19 համավարակից առաջ՝ մի ժամանակահատվածում, երբ պլաստիկի արտադրությունը և թափոնների ծավալները կտրուկ աճեցին: Առաջնորդվելով պլաստիկով աղտոտումից զերծ, սոցիալական և գենդերային առումով ավելի արդար աշխարհի տեսլականով՝ Հայնրիխ Բյոլ հիմնադրամի գրասենյակները գործադրում են ամեն ջանք էկո-քաղաքական կրթության ոլորտում՝ ներկայացնելու պլաստիկի ճգնաժամի ընդհանուր պատկերը և ամբողջական հետևանքները: Այս մասին հանրային պատկերացումները էապես փոխելու համար անհրաժեշտ է ոչ միայն խորապես հասկանալ հիմնական պատճառները և կառուցվածքային խնդիրները, այլև ներգրավել տուժած համայնքներին: Շրջակա միջավայրի՝ պլաստիկ թափոններով աղտոտման դեմ պայքարի շրջանակում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի ծրագրերն ուղղված են ոչ թե սոսկ պլաստիկ արտադրող ընկերություններին պատասխանատվության կանչելուն, այլև պլաստիկի ճգնաժամից անհամաչափորեն տուժած կանանց և ԼԳԲՏՔԻ+ անձանց նկատմամբ բազմակի խտրականությունը բացահայտելուն:

ՊԼԱՍՏԻԿՈՎ ԱՂՏՈՏՈՒՄԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐ Է. ՄԻՋՍԵԿՑԻՈՆ ՎԵԲԻՆԱՐՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Արդյոք գիտակցում ենք, որ մեկանգամյա օգտագործման պլաստիկե արտադրանքի արգելքը կարող է նաև բացասական հետևանքներ ունենալ: Բազմաթիվ ապրանքներ՝ հիգիենիկ միջոցներից մինչև ըմպաճողիկներ, անհրաժեշտ են տարեցների և հատուկ բժշկական կարիքներ ունեցող մարդկանց խնամքի համար: Հաճախ էլ այդ խնամքը հնարավոր չէ առանց այդ պարագաների: Նմանապես, թունավոր բաղադրիչներ պարունակող էժանագին միջադիրները թույլ են տալիս անապահով ընտանիքներում ապրող աղջիկներին դպրոց հաճախել դաշտանային ցիկլի ժամանակ: Բացի այդ, մեկանգամյա օգտագործման պլաստիկե շշերը հաճախ անհրաժեշտություն են, այլ ոչ թե «հարմարավետություն» այն տնային տնտեսություններում, որոնք չունեն մաքուր և անվտանգ խմելու ջրի հասանելիություն:

Նպատակ ունենալով չբարդացնել հաշվանդամություն ունեցող անձանց կյանքը բնապահպանական միջոցառումներով և հասանելի դարձնել շրջակա միջավայրի մասին գիտելիքը և կրթությունը անխտիր բոլոր սոցիալական խմբերի համար՝ «Ազատվեք պլաստիկից» շարժումը հաստատում է, որ պլաստիկով աղտոտումը միայն բնապահպանական խնդիր չէ, այլև սոցիալական արդարության խնդիր, որը բխում է գենդերով, սոցիալական կառուցվածքով և աշխարհագրությամբ պայմանավորված անհավասարությունից: Ըստ այդմ, շարժումը պլաստիկի դեմ պայքարող ակտիվիստների համար մշակել է առցանց սեմինարների շարք՝ քննարկելու պլաստիկով աղտոտման հետ կապված խտրականության դրսևորումները: Այս նախաձեռնությունը ծառայում է որպես գենդերազգայուն և խտրականության վերացմանն ուղղված ջատագովության կարևոր օրինակ: Ինչպես նշում են նախաձեռնության հեղինակները՝ «Միայն խտրականության խաչաձևվող դրսևորումները բացահայտելու միջոցով կարող ենք գտնել և ջատագովել արդարացի և կայուն լուծումներ, որոնք իրապես դրական ազդեցություն կունենան»:

https://www.breakfreefromplastic.org/intersectionality/

ՍԱԼՎԱԴՈՐ: ԲՆԱՊԱՀՊԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ

COVID-19 համավարակից ի վեր պլաստիկ թափոնների հոսքը ԱՄՆ-ից դեպի Սալվադոր կտրուկ աճել է, ինչին նպաստել են նաև թույլ վերահսկողական մեխանիզմները և տեղական իշխանությունների անգործությունը: Այս միտումն ավելի ակնհայտ դարձավ մի քանի տարի առաջ, երբ երկրի խաղաղօվկիանոսյան ափ բերվեց դժվար վերամշակվող նյութերի ահռելի քանակ: Այս գործընթացին հակազդելու նպատակով Հայնրիխ Բյոլ հիմնադրամի գրասենյակը օժանդակեց բնապահպան և լրագրող կին ակտիվիստների մի խմբի՝ հետաքննելու պլաստիկով աղտոտման տարբեր փուլերը, ինչպես նաև այն ձախողված քաղաքականությունը, որը հանգեցրեց այդ աղետալի վիճակին: Հետաքննության շրջանակում այս խումբը դիմել է նաև վերամշակման ոլորտի մի փորձագետի, որը ապրուստը վաստակում է թափոններ հավաքելով, իսկ այժմ ապրանքանիշի առուդիտ անցկացնելու հարցում խորհրդատվություն է տրամադրում մի հասարակական կազմակերպության՝ կորպորացիաներին հաշվետու դարձնելու նպատակով: Այս լրագրող ակտիվիստները բացահայտել են ոչ միայն օրենսդրական բացերը, այլև այն որոշում կայացնողներին, որոնք ոչինչ չեն ձեռնարկել: Նրանց պատրաստած ուշագրավ զեկույցը ցույց է տալիս, որ կանայք էկոլոգիական հարցերում լուրջ փորձառություն ունեն և ներգրավված են թափոնների կառավարման բոլոր մակարդակներում: Բնապահպանական վնասները բացահայտելուց զատ այս խումբը միավորում է նաև ոլորտից դուրս մարդկանց՝ այդպիսով նոր թափ հաղորդելով հաշվետվողականության գործընթացին: Այդուհանդերձ, Լատինական Ամերիկայում բնապահպան լրագրողները դառնում են սպառնալիքների թիրախ, հատկապես երբ ի հայտ են բերում այնպիսի անթույլատրելի գործելակերպեր, որոնց ետևում կանգնած են խոշոր կորպորացիաները: Հետևապես, այսօր թափոնների արտահանման և պետական վերահսկողության բացակայության վերաբերյալ գենդերազգայուն լրագրողական հետաքննությունը առավել քան երբևէ հրամայական է:

Այս դինամիկան սերտորեն կապված է այն համատեղ ջանքերի հետ, որոնք ուղղված են տարածաշրջանի էկոհամակարգերի, այդ թվում՝ Լեմպա գետի ավազանի, ինչպես նաև Սալվադորում և Գվատեմալայում դրան հարող ափամերձ ջրերի պաշտպանությանը: Քաղաքացիական հասարակությունը կանանց կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ առանցքային դերակատարություն ունի անդրսահմանային համագործակցությունը խրախուսելու, հանրային քննարկումներ ձևավորելու և որոշում կայացնողների վրա ավելի մեծ ճնշում գործադրելու հարցում:

https://sv.boell.org/es/2022/05/16/el-salvador-sin-controles-para-los-plasticos

ՔԵՆԻԱ: ՈՎՔԵՐ ԵՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՎ ՈՒՄ ՁԱՅՆՆ Է ԼՍԵԼԻ ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՈՒՄ

Քենիայում անցումը դեպի պլաստիկի շրջանաձև տնտեսությունն իրականացվում է Արտադրողների ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) համակարգի միջոցով: Թեև ԱԸՊ-ն առաջին հերթին նպատակ ունի արտադրողներին պատասխանատու դարձնել թափոնների կառավարման համար և ստեղծել վերահսկողության ավելի արդյունավետ մեխանիզմներ, այս բարեփոխումը հիմնվին վերասահմանում է, թե ում են հասանելի ռեսուրսները և տնտեսական հնարավորությունները:

Քենիայում թափոնների վերամշակման ոլորտը մեծապես կախված է թափոն հավաքողներից, որոնցից շատերը կանայք են: Նրանք հաճախ աշխատում են վտանգավոր և անկայուն պայմաններում՝ միևնույն ժամանակ անտեսվելով ոլորտի քաղաքականության ծրագրերում: Եթե ԱԸՊ կանոնակարգերը հիմնվել են ներառականության սկզբունքի վրա, վտանգ կա, որ վերահսկողությունը կկենտրոնանա մի քանիսի ձեռքում, կսահմանափակվի երկրորդային հումքի հասանելիությունը և այն մարդկանց ապրուստի միջոցները, որոնց շնորհիվ այդ այդ համակարգը գործում է:

Այս վտանգներին հակազդելու համար քաղաքացիական հասարակության կոալիցիաները Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Նայրոբիի գրասենյակի աջակցությամբ ազգային և գլոբալ քաղաքականության մշակման հարթակներում առաջ են մղում համայնքային շահերը: Բարձրաձայնելով տեղական խնդիրների մասին ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ասամբլեայի նստաշրջանների և պլաստիկով աղտոտման վերաբերյալ միջազգային համաձայնագրի շուրջ բանակցությունների ժամանակ այս դերակատարները տեղական աշխատուժի ձայնը լսելի են դարձնում միջազգային քննարկումներում: Այս ամենը մարտահրավեր է նետում ստատուս քվոյին՝ սահմանելով, թե ով պետք է որոշի քաղաքականության առաջնահերթությունները և լուծումները: Ֆեմինիստական տեսանկյունից այսպես ավելի ընդհանրական հարց է առաջ քաշվում. արդյոք հնարավոր է, որ անցում կատարվի աշխատողներին այս գործընթացում ընդգրկելու մոդելից դեպի մի համակարգ, երբ շրջանաձև տնտեսության բարեփոխումներն իրականացնում են հենց այն հասարակ աշխատողները, որոնց ուսերին է դրված ոլորտի գործունեությունը:

https://ke.boell.org/en/2024/04/03/gender-equitable-employment-amidst-kenyas-plastic-predicament

https://cejadkenya.org/sites/default/files/Press%20release/31st%20JULY%20PRESS%20STATEMENT.pdf



ՆԻԳԵՐԻԱ: Ո՞Վ Է ՇԱՀՈՒՄ ԴԵՊԻ ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՈՒՄԻՑ

Նիգերիայի անցումը դեպի շրջանաձև տնտեսություն պայմանավորված է որդեգրված նոր քաղաքականությամբ, տնտեսական խթաններով և կայուն փաթեթավորման համակարգում աճող ներդրումներով: Այդուհանդերձ, այս անցումը բոլորովին չեզոք բնույթ չունի. այն վերաբաշխում է ռեսուրսները, հնարավորությունները և ռիսկերը տարբեր դերակատարների միջև:

Թեև Նիգերիայում թափոնների հավաքման և վերամշակման հիմնայունը ոչ ֆորմալ հատվածն է, այնտեղ կանայք խիստ անհամաչափ են ներկայացված՝ հաճախ աշխատելով վտանգավոր և անկայուն պայմաններում: Չնայած իրենց անփոխարինելի դերին՝ այս աշխատողները ֆինանսական աջակցություն չեն ստանում, դուրս են մնում քաղաքականության մշակման գործընթացից և տնտեսական դերակատար չեն համարվում: Այնինչ նոր զարգացող «կանաչ» ձեռնարկությունները և ֆորմալ արտադրողները, որոնց մեծ մասը ղեկավարում են տղամարդիկ, ավելի մեծ հնարավորություններ ունեն օգտվելու նոր կարգավորումների առավելություններից և ինստիտուցիոնալ աջակցությունից:

Այս անհավասարությունները հասցեագրելու նպատակով Աբուջայում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի գրասենյակը և նրա գործընկերները բնապահպանական ծրագրի միջոցով քարտեզագրում են կայուն այլընտրանքային լուծումները՝ ներգրավելով ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերին: Այս կերպ տեսանելի են դառնում համակարգային անհավասարությունները, ինչպես նաև նոր հարթակներ են ստեղծվում, որոնց միջոցով կանանց խմբերը, ոչ ֆորմալ հատվածում աշխատողները և փոքր ձեռնարկատերերը կարող են հստակ ձևակերպել իրենց կարիքները և ուղղակիորեն ազդել քաղաքականության մշակման վրա:

Այս մոտեցումը «կանանց ներգրավելու» կրկնված հարցից ուշադրությունը տեղափոխում է այն խնդրի վրա, թե ինչպես են ձևավորվում արժեքը, աշխատուժը և նորարարությունը շրջանաձև տնտեսությունում և ում է տրված այդ ապագան կերտելու հնարավորությունը:

https://ng.boell.org/en/2026/03/31/policy-brief-inclusive-waste-governance-nigeria

Վերամշակումից մինչև իրավունքներ

Ինչպես են ակտիվիստներն ամբողջ աշխարհում համատեղում բնապահպանական արդարությունը, ինչպես նաև խտրականության և պլաստիկի դեմ պայքարը

ԲԵՌԼԻՆ: ՓԱԹԵԹԻՑ ԱՆԴԻՆ. ՊԼԱՍՏԻԿ ԹԱՓՈՆՆԵՐՆ ԱՆՋՐՊԵՏ ԵՆ ՍՏԵՂԾԵԼ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ

«Ոչինչ չի փոխվի, քանի դեռ մարդիկ չեն հասկացել, որ պլաստիկը բացարձակապես ամենուր է: Բայց մեզ դպրոցում էլ չեն պատմել պլաստիկի մասին»: Հանրային իրազեկման ոչ մեթոդն է քաջալերում երիտասարդներին՝ քայլեր ձեռնարկելու պլաստիկի հեղեղի դեմ: Ինչ է նրանց անհրաժեշտ և ինչ են նրանք ցանկանում իմանալ այս ճգնաժամի մասին՝ տեղեկացված լինելու, բայց դրա առեղի մասշտաբներից չճնշվելու համար: Ինչպես կարելի է պլաստիկի տեսակների և դրանց կառուցվածքի մասին տեսական գիտելիքները դարձնել ավելի հասանելի, որ բոլորին հետաքրքրեն արդյունաբերության ոլորտի զարգացումները: Այս հարցադրումներին արձագանքելու համար Հայնրիխ Բյոլ հիմնադրամի գլխամասային գրասենյակը հրատարակել է երիտասարդների համար նախատեսված գրքույկ՝ «Առանց փաթեթի: Պլաստիկը, թափոնները և ես» անվանումով: Գրքույկը հետաքրքրաշարժ գծապատկերների և պատմությունների միջոցով պատասխանում է պլաստիկի ճգնաժամի վերաբերյալ 70 առանցքային հարցերի: Այն միջազգային երկխոսության արդյունք է՝ տպագրված առանց պլաստիկի կիրառման, որի մշակումն իրականացրել է երիտասարդներից կազմված խորհրդատվական խորհուրդը: Այստեղ արծարծվել են նաև խիստ անձնական թեմաներ, օրինակ՝ ինչպես կարող են քիմիական նյութերը երկարաժամկետ հատվածում ազդել ֆիզիոլոգիական զարգացման և առողջության վրա: Գրքույկում ներկայացված տվյալներն արդիական են նաև այսօր, և այն շարունակում է մնալ եզակի ուսումնական նյութ:

https://www.boell.de/en/unpacked-plastic-waste-me

ԲԵՌԼԻՆ: ՊԼԱՍՏԻԿԻ ՔԱՐՏԵԶԱԳԻՐՔԸ

«Պլաստիկի քարտեզագիրքը» բնապահպանական մարտահրավերների մասին Հայնրիխ Բյոլ հիմնադրամի պատրաստած ամենահաջող գրքույկներից է: 2019 թվականի շնորհանդեսից ի վեր այն վերահրատարակվել է վեց անգամ և հասանելի է 22 լեզուներով, այդ թվում՝ արաբերեն, հունարեն, կորեերեն և բազմաթիվ այլ լեզուներով: Քարտեզագրքում ներկայացված են հստակ տվյալներ մարդու առողջությանը սպառնացող այն վտանգների մասին, որոնք պայմանավորված են պլաստիկի կենսացիկլով՝ արտադրությունից և օգտագործումից մինչև վերջնական հեռացում: Հատկանշական է, որ քարտեզագրքում պարզորոշ կերպով ընդգծված է գոյություն ունեցող գենդերային անհավասարակշռությունը. Ֆիզիոլոգիական գործոնների և աշխատանքի բաժանման բնույթի պատճառով պլաստիկում եղած թունավոր նյութերը կանանց և ԼԳԲՏՔԻ+ անձանց վրա ունեն ավելի ծանր ազդեցություն, քան տղամարդկանց: Գրքույկում ներկայացված վիճակագրությունը հստակ արտացոլում է այս պատկերը: Օրինակ՝ դաշտանային հիգիենայի մեկանգամյա օգտագործման պարագաներ օգտագործողները տասնամյակներ շարունակ շփվում են նավթից ստացված և էնդոկրին համակարգը խաթարող պլաստիկի հետ: Այս շուկայում ներկայումս գերիշխում են այն կորպորացիաները, որոնք միջադիրներից, տակդիրներից և մեկանգամյա օգտագործման այլ հիգիենիկ պարագաներից ստացվող շահույթը գերադասում են հանրային առողջությունից: Սա ֆեմինիստական քննարկումների հրատապ թեմա է, որն այժմ առաջին պլան է մղվում նաև պլաստիկի դեմ պայքարի շրջանակում:

https://www.boell.de/en/plastikatlanten

ԹԱՒԼԱՆԴ: Ո՞Վ Է ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ՊԼԱՍՏԻԿԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔԸ ԵՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՃԳՆԱԺԱՄԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ

Պլաստիկի ճգնաժամը վերաբերում է ոչ միայն թափոնների կառավարմանը, այլ այն հարցին, թե ում գիտելիքը, փորձառությունը և առաջարկած լուծումներն են կարևորություն ստանում: Այս բանավեճում իր ներդրումն ունի Բանգկոկում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի գրասենյակը՝ լսելի դարձնելով այն տեսակետները, որոնք հաճախ լուսանցք են մղվում գերիշխող բնապահպանական խոսույթում: Հետազոտությունների և հանրային իրազեկման, այդ թվում՝ առցանց տեղեկատվական հարթակների և հարցազրույցների միջոցով, ուշադրություն է հրավիրվում այն հանգամանքի վրա, թե ինչպես են կանայք, հատկապես ոչ ֆորմալ հատվածում անկայուն աշխատանք ունեցողները, անհամաչափորեն ավելի շատ ենթարկվում պլաստիկի արտադրության և թափոնների ազդեցությանը: Այս նախաձեռնությունը ցույց է տալիս նաև, թե ինչպես են կանայք մշակում պլաստիկ թափոնների վերաօգտագործման, նորոգման և կրճատման եղանակներ:

Միևնույն ժամանակ, այնպիսի գործիչներ, ինչպիսին է թաիլանդացի արվեստագետ և հասարակական ակտիվիստ Վիշուլադա Պանտանուվոնգը, ներկայացնում են պլաստիկ թափոնների հետ աշխատելու այլընտրանքային մոտեցումներ՝ թափոնները վերածելով ռեգեներատիվ արվեստի և դիզայնի, իսկ բնապահպանական գիտելիքը կապելով մշակութային գործելակերպերի և հավաքական գործողության հետ: Այս կերպ կանայք սոսկ խոցելի խմբից վերածվում են գիտելիք ստեղծող և փոփոխություններ բերող անհատների: Այս մոտեցման շնորհիվ տեսանելի է դառնում, որ կառուցվածքային անհավասարություններով է պայմանավորված այն, թե ում աշխատանքն է արժևորվում, ում փորձն է ուշադրության արժանանում և ում գաղափարներն են ազդում քաղաքականության մշակման և հանրային քննարկումների վրա:

https://th.boell.org/en/2022/03/18/plastic-crisis-must-be-feminist-agenda
https://www.youtube.com/watch?v=xOzQ7qprViU&t=3s
https://th.boell.org/en/2024/10/21/sachets-plastics-ocean
https://kh.boell.org/en/2025/01/09/nexus-gender-waste

ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ: ՈՒՄ ՈՒՍԵՐԻՆ ԵՆ ԸՆԿՆՈՒՄ ՊԼԱՍՏԻԿԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԵՌԸ

Հարավարևելյան Ասիայի ամբողջ տարածաշրջանում պլաստիկով աղտոտումը սերտորեն կապված է արտադրության և սպառման գլոբալ մոդելների հետ: Վերազգային կորպորացիաները ցածր եկամուտ ունեցող շուկաները հեղեղում են փաթեթավորված մեկանգամյա օգտագործման ապրանքներով՝ այդպիսով այդ առաջին անհրաժեշտության պարագաներն ավելի հասանելի դարձնելով և միևնույն ժամանակ դրանց սոցիալական բեռը թողնելով տեղական համայնքների ուսերին: Այդ վնասները անհամաչափորեն կրում են ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները, թափոնների ոլորտում աշխատողները և աղտոտումից տուժած համայնքները, որտեղ ընդունված գենդերային դերերից են կախված վտանգավոր նյութերի ազդեցության մակարդակը, աշխատանքի բաժանումը և պարտականությունների շրջանակը:

Տեղական նախաձեռնությունները՝ թափոն հավաքողների ինքնակազմակերպումից մինչև «զրո թափոն» գործընթացը և ֆեմինիստական հետազոտությունների մշակումն ու տարածումը, ուշադրություն են հրավիրում վերոնշյալ խնդիրների վրա՝ առաջարկելով այլընտրանքային գործելակերպեր՝ հիմնված խնամքի, վերաօգտագործման և հավաքական գործողության վրա: Հայնրիխ Բյոլ հիմնադրամի գրասենյակները Բանգկոկում և Պնոմպենում երկար ժամանակ քննական վերլուծության են ենթարկել գենդերի (սոցիալական նորմերը, վարքագիծը և դերերը պայմանավորող կոնստրուկտ) և թափոնների միջև կապը՝ ելնելով համայնքային նախաձեռնությունների տեսանկյունից: Վերջիններս, արտացոլելով տեղական առանձնահատկությունները, շեշտը դնում են ոչ թե անհատական սպառման, այլ կառուցվածքային հաշվետվողականության վրա՝ միաժամանակ հարց բարձրացնելով, թե ում առաջարկած լուծումները պետք է ընդունվեն մի համակարգում, որը ձևավորվել է գլոբալ անհավասարության արդյունքում:

https://th.boell.org/en/2024/10/21/sachets-plastics-ocean
https://kh.boell.org/en/2025/01/09/nexus-gender-waste

ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Գենդերային դերերի վերաբերյալ կարծրատիպերն աստիճանաբար փոփոխության են ենթարկվում խոշոր քաղաքներում: Այդուհանդերձ, աշխարհում սեռերի միջև աշխատանքի ոչ արդարացի բաշխման փոփոխություն չի նշմարվում: Կենցաղում կանայք շարունակում են կատարել թափոնների տեսակավորման և մեկուսացման հիմնական պարտականությունը: Կանայք են կատարում նաև ամենօրյա գնումների մեծ մասը: Սակայն ինչ լծակներ ունեն կանայք, հատկապես՝ Գլոբալ Հյուսիսի երկրներում, նվազեցնել հումքի սպառումը, ուստի նաև՝ թափոնների ծավալը՝ ընտրելով, թե որ ապրանքն արժե գնել այս տեսանկյունից: Հաշվի առնելով, որ ՏՀԶԿ երկրներում մեկ շնչի հաշվով միջին նյութական սպառումը 60 տոկոսով ավելի բարձր է, քան աշխարհի մյուս մասերում, իսկ թափոնների միջին արտադրությունը մեկ շնչի հաշվով կազմում է 1.5 կիլոգրամ՝ գենդերը կարող է առանցքային գործոն հանդիսանալ սպառողական վարքագիծը փոխելու հարցում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կանայք և սոցիալական շփումներում որպես կին հանդես եկող անձինք օգտագործում

ԿԱՆԱՅՔ ԱՎԵԼԻ ՔԱՋԱԾԱՆՈԹ ԵՆ **ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**, ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՊԻՏԱԿՆԵՐԻՆ, ԻՍԿ ՏՂԱՄԱՐԴԻԿ՝ **ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՊԻՏԱԿՆԵՐԻՆ[8]:

են բազմաթիվ կոսմետիկ և հիգիենիկ պարագաներ, որոնք պարունակում են միկրոպլաստիկ և էնդոկրին համակարգը խաթարող նյութեր՝ ֆեմինիստական-բնապահպանական կազմակերպությունները պահանջում են ապահովել ավելի մեծ թափանցիկություն՝ սպառողներին ավելի տեղեկացված լինելու հնարավորություն տալով: «Կանայք հանուն ապագայի» (WCEF) հասարակական կազմակերպությունը պահանջում է առաջին հերթին սպառիչ և մատչելի կերպով մանրամասն աշխատավայրերում և կենցաղում օգտագործվող պլաստիկ արտադրանքի թունավորության աստիճանը: «Սպառողներին պետք է գնումների վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու հնարավորություն տրվի» (WCEF/WEN, 2001):

Այսուամենայնիվ, միայն տեղեկատվական քաղաքականության բարելավումը բավարար չէ հակազդելու պլաստիկի ճգնաժամին և սոցիալական ու գենդերային հետևանքներին: Թեև պլաստիկի մասին տեղեկատվությունը և գիտելիքը կարող են օգնել սպառողին ավելի խոհեմ վարք ցուցաբերելու հարցում, ինչն իր հերթին կարող է մեծացնել ճնշումը արտադրողների, վաճառողների և քաղաքականություն մշակողների վրա, ամենամեծ հրամայականը ազգային և միջազգային հստակ կարգավորումներն են, որոնք ոչ միայն կարգելեն թունավոր նյութերի արտադրությունը, այլև պատիժ կսահմանեն հնարավոր խախտումների համար:

ՖԵՄԻՆԻՍՏ ԲՆԱՊԱՀՊԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Պլաստիկի դեմ քաղաքացիական հասարակության ծավալած շարժումը, որը կոորդինացնում է «Ազատվեք պլաստիկից» գլոբալ դաշինքը, արդեն իսկ զգալի արդյունքների է հասել քաղաքականություն մշակողների հետ համագործակցելու և արտադրողների վրա ճնշում գործադրելու հարցում: Տարբեր երկրների կառավարություններ նախաձեռնել են բազմաթիվ ծրագրեր՝ կրճատելու մեկանգամյա օգտագործման պլաստիկե արտադրանքի թափոնների ծավալը: Սակայն չափազանց քիչ բան է արվել արտադրության փուլում՝ ի սկզբանե միկրոպլաստիկի և այլ տոքսինների օգտագործումը նվազեցնելու նպատակով: Եվ այս հարցում ներգրավված բոլոր կողմերը՝ ոչ միայն արտադրող ընկերությունները, այլև կառավարությունները, հետազոտողները և քաղաքացիական հասարակությունը, պետք է ընդունեն այն փաստը, որ քիչ ուշադրություն են դարձրել կամ ուղղակի աչք են փակել առողջությանը և շրջակա միջավայրին հասցված վնասի գենդերային ասպեկտի վրա:

Ուստի, «WCEF» ֆեմինիստական կազմակերպությունը կոչ է անում ռիսկերը գնահատելիս և ուղենիշներ սահմանելիս առաջնահերթ հաշվի առնել ամենախոցելի խմբերը՝ երեխաները և հղիները: Կազմակերպությունը հորդորում է նաև խստագույնս պահպանել նախազգուշության սկզբունքը: Վերջինիս հետևողական պահպանումը հնարավոր վնասը կանխարգելելու և զգալիորեն նվազեցնելու հետ մեկտեղ կխթանի թունավոր նյութերի ավելի խիստ արգելքների սահմանմանը պլաստիկի արտադրության բոլոր փուլերում:

«WCEF»-ը, ի թիվս այլ բնապահպանական կազմակերպությունների, շեշտում է նաև, որ պլաստիկով աղտոտման վերաբերյալ միջազգային համաձայնագիրը պետք է ունենա հստակ թիրախներ՝ էապես կրճատելու պլաստիկի արտադրությունը, բացառելու վտանգավոր քիմիական նյութերի օգտագործումը պլաստիկի կենսացիկլի բոլոր օղակներում, երաշխավորելու քիմիական բաղադրության թափանցիկությունը և ապահովելու արդար անցումային գործընթաց աշխատողների համար, հատկապես նրանց, ովքեր ներգրավված են ոչ ֆորմալ հատվածում՝ աշխատելով անկայուն պայմաններում:

Հարկ է նշել, որ առ այսօր պլաստիկ թափոնների հոսքը դեպի ջրային ուղիներ կամ այլ երկրներ դրանց արտահանումը կասեցնելու բոլոր փորձերը՝ լինեն դրանք պլաստիկ տոպրակների արգելքը աֆրիկյան և ասիական բազմաթիվ երկրներում, մեկանգամյա օգտագործման սպասքի կարգավորումները ԵՄ-ում, կոսմետիկ պարագաներում միկրոպլաստիկի օգտագործման սահմանափակումը ԱՄՆ-ում կամ տասնամյակներ շարունակ գործող կանաչ կետանշման երկակի համակարգը Գերմանիայում, գլխավոր խնդիրը լուծելու փոխարեն կենտրոնանում են աղբահանության վրա՝ այդպիսով պատասխանատվության բեռը դնելով բացառապես սպառողների ուսերին: Այդ միջոցառումներն ուղղված են խնդրի հետևանքները, այլ ոչ թե պատճառները վերացնելուն: Մի խոսքով՝ դրանք բացարձակապես չեն հարկադրում արտադրողներին սահմանափակել իրենց գործունեությունը: Ավելին՝ հետևանքների վերացմանն ուղղված այս քաղաքականությունը ավելի է ամրապնդում սեռերի միջև աշխատանքի անարդարացի բաժանումը: Այդ միջոցառումները նույնիսկ ինչ-որ կերպ թիրախավորում են կանանց՝ նրանց դիտարկելով որպես հիմնական սպառող, մաքրման անհատույց ծառայություններ կատարող կամ պլաստիկի արտադրության աղտոտված հաստատությունների ցածր վարձատրվող աշխատող:

Հետևաբար, ֆեմինիստական մոտեցումը չի կարող սահմանափակվել միայն սպառողներին տեղեկացնելով կամ թափոնների կառավարման վերջնական միջոցառումներով: Այն պետք է անդրադառնա արտադրությանը, թունավոր նյութերի ազդեցությանը, աշխատանքային պայմաններին և կորպորատիվ

ԿԱՆԱՅՔ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ԵՆ ԱՎԵԼԻ **ԿԱՅՈՒՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ** ԵՎ ԱՎԵԼԻ ԻՐԱԶԵԿ ԵՆ **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐՈՒՄ**[8]:

8 ՏՀԶԿ (2024). Տնային տնտեսությունների «կանաչ» վարքագիծը: 2011 թվականին անցկացված հարցման ամփոփում: Վերանայված հրատարակություն, ՏՀԶԿ ուսումնասիրություններ բնապահպանական քաղաքականության և տնային տնտեսությունների վարքագծի վերաբերյալ, Փարիզ]- (https://doi.org/10.1787/9789264214651-en)

Պայքարը պլաստիկով աղտոտման դեմ պահանջում է գենդերազգայուն քայլեր



ՏԱՆ ՀԱՄԱՐ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ **ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ** 80 ՏՈԿՈՍԸ ԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ԿԱՆԱՅՔ, ՄԻՆՉԴԵՌ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՏԻ 80 ՏՈԿՈՍԸ **ԾԱԽՍՈՒՄ** ԵՆ ՏՂԱՄԱՐԴԻԿ[8]:

հաշվետվողականությանը պլաստիկի կենսացիկլի բոլոր օղակներում: Գենդերային մեյնսթրիմինգը չպետք է վերաբերի միայն մասնակցությանը՝ երաշխավորելու իրական ազդեցություն, ներկայացվածություն և պաշտպանություն:

Միևնույն ժամանակ, մեծանում է վտանգը, որ առաջարկվող «լուծումները» մնում են մակերեսային. «կանաչ լվացման» ռազմավարությունները, տեխնոլոգիական հապճեպ լուծումները և վերամշակման վրա հիմնված մոտեցումները հաճախ արտադրության ծավալները և թունավոր քիմիական նյութերի կիրառումը թողնում են անփոփոխ: Շրջանաձև տնտեսության անցնելու խոստումները չեն նվազեցնում հանածո վառելիքից ստացվող պլաստիկի արտադրությունը և խնդիրը լուծելու փոխարեն այն արմատավորելու դիսկ են պարունակում:

Պլաստիկի խնդիրը մեր ժամանակների մեծագույն բնապահպանական մարտահրավերներից մեկն է: Այն պետք է շուտափույթ համակարգային լուծում ստանա: Սակայն ցանկացած լուծում, որը չի համադրում բնապահպանական և գենդերային նկատառումները, անկատար կմնա: Գենդերային հետազոտությունները և ֆեմինիստների առաջ քաշած պահանջները մատնանշում են այն հսկայական վնասը, որ հասցվում է անապահով մարդկանց և բազմակի խտրականության ենթարկվող անձանց առողջությանը: Դրանք նաև ցույց են տալիս այն սերտ կապը, որ գոյություն ունի ըստ սեռի աշխատանքի բաժանման հիերարխիկ բնույթի և պլաստիկ արտադրողների ստացած շահույթի միջև: Պլաստիկի ճգնաժամի մաս են կազմում մի շարք խնդիրներ, այդ թվում՝ գենդերային անհավասարությունը, ռեսուրսների կառավարման գործընթացում կանանց ոչ նշանակալի դերը, ընտանիքում և համայնքում կանանց ուսերին դրված մաքրման և այլ աշխատանքների անհամաչափ մեծ բեռը և դրանով պայմանավորված՝ ժամանակի սղությունը, ինչպես նաև անհատույց այլոց խնամքով զբաղվելու կրկնակի և եռակի պարտավորությունը, ինչը թույլ չի տալիս կրթություն ստանալ և մասնակցել հանրային կյանքին:

Այդ իսկ պատճառով ֆեմինիստական և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները շարունակում են մատնացույց անել պլաստիկի կենսացիկլի բոլոր օղակներում վտանգավոր քիմիական նյութերի պատճառած առողջական և բնապահպանական վնասները՝ ազդեցություն, որ անտեսում, կոծկում կամ արդարացնում են շահույթ հետապնդող արդյունաբերական ընկերությունները: Ֆեմինիստական տեսանկյունից քիմիական անվտանգությունը ոչ թե երկրորդական խնդիր է, այլ հանդիսանում է պլաստիկի ճգնաժամի հաղթահարման գլխավոր ուղիներից մեկը:

Առաջարկվում է հենց այն, ինչ այսօր պակասում է՝ պլաստիկի կենսացիկլի բոլոր օղակների վերաբերյալ գենդերազգայուն հետազոտություններ և մոտեցումներ՝ սկսած հումքի արդյունահանումից և մշակումից, արտադրությունից և սպառումից մինչև վերամշակում և վերջնական հեռացում: Գործարար հատվածը միակը չէ, որ անուշադրության է մատնում գենդերի դերը: Թափոնների կրճատման և վերամշակման վերաբերյալ հետազոտությունները, որոնք շրջանցում են պլաստիկի հիմնական սպառողների գործնական գիտելիքները, ըստ էության անում են նույն բանը: Քաղաքականություն մշակողները ևս հաճախ անտեսում են գենդերը, մասնավորապես՝ երբ պլաստիկի ազդեցությունը կրճատելու միջոցառումները խարսխում են գենդերային կարծրատիպերի վրա:

Նույնիսկ պլաստիկի դեմ պայքարող ակտիվիստները, որոնք ներկայացնում են քաղաքացիական հասարակությունը, մինչև օրս չեն ձևակերպել իրենց պահանջները կամ ծրագրել գործողություններն այնպես, որ դրանք լինեն գենդերազգայուն և հաշվի առնեն բազմակի խտրականության բախվող մարդկանց կարիքները:

Մեծ հույս կա, որ պլաստիկով աղտոտման վերաբերյալ միջազգային համաձայնագիրը կունենա պարտադիր իրավական ուժ: Այդուհանդերձ, 2026 թվականի սկզբի դրությամբ այդ համաձայնագրի շուրջ բանակցությունները դեռ արդյունք չեն տվել: 2025 թվականի օգոստոսին Ժնևում կայացած միջկառավարական կոմիտեի 5-րդ նիստի երկրորդ հատվածն ավարտվեց առանց կոնսենսուսի, իսկ 2026 թվականի փետրվարի կարճ նիստի երրորդ հատվածը սահմանափակվեց միայն կազմակերպչական հարցերի քննարկմամբ, մինչդեռ բովանդակային բանակցությունները հայտնվեցին փակուղում:

Այս փակուղու պատճառը արտադրության կրճատման թիրախների և վտանգավոր քիմիական նյութերի հետ կապված կարգավորումների շուրջ տարաձայնություններն են՝ հարցեր, որոնք չափազանց կարևոր են ֆեմինիստական տեսանկյունից: Մտավախություններ կան նաև, որ նվազում է այս գործընթացի թափանցիկությունը, իսկ բանակցությունները բաց չեն բոլորի համար: Մասնավորապես՝ բնիկների համայնքների և կանանց խմբերի ներկայացուցիչները մշտապես բախվում են նման խոչընդոտների, ինչը խարխլում է շահագրգիռ կողմերի բովանդակային ներգրավվածությունը և պլաստիկով աղտոտումից առավել տուժած անձանց մասնակցությունը:

Անհրաժեշտ է անդրադառնալ պլաստիկի կենսացիկլի յուրաքանչյուր օղակին: Խիստ կարևոր է, որ բոլոր փուլերում տուժած և վնասներ կրած բոլոր խմբերն ունենան հավասար ներկայացվածություն միջազգային այս բանակցություններում: Ֆեմինիզմի և մարդու իրավունքների տեսանկյունից սա ենթադրում է թափանցիկ և ներառական բանակցային գործընթացի ապահովում՝ երաշխավորելու, որ սեռամորթ, բնիկ և թխամորթ բնակչության, կանանց և այլ մարգինալացված խմբերն անուշադրության չմատնվեն: Այն պահանջում է նաև առավել ակտիվորեն կիրառել ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները, այդ թվում՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի նորմերը՝ պետություններին պատասխանատվության ենթարկելու նպատակով:

Սեռով տարանջատված տվյալների բացակայության պարագայում կանանց սպառնացող բազմաթիվ վտանգներ մնում են թերագնահատված, հատկապես՝ խնամքի ծառայությունների, ոչ ֆորմալ զբաղվածության և արդյունաբերության՝ ցածր վարձատրվող ոլորտներում: Հետևապես, մշակվող ծրագրերը չեն կարող անհրաժեշտ պաշտպանություն և այլ ռեսուրսներ ապահովել առավել տուժած մարդկանց համար:

ԿԱՆԱՅՔ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԳՆՈՒՄ ԵՆ **ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ**, ԻՍԿ ՏՂԱՄԱՐԴԻԿ՝ **ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ (ՇՔԵՂ) ԱՊՐԱՆՔՆԵՐ**[8]:

Վերջապես, ՄԱԿ-ի այս նորհամաձայնագրի նախապատրաստությանը և միջկառավարական բանակցություններին զուգահեռ հարկավոր է պաշտպանել և ամրապնդել կանանց, ԼԳԲՏՔԻ+ անձանց և այլ փոքրամասնությունների իրավունքը՝ մասնակցություն ունենալու նավթաքիմիական արտադրության, ինչպես նաև պլաստիկի և դրա բաղադրիչների օգտագործման և մեկուսացման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում:

Այժմ հարկավոր է ոչ միայն շարունակել բանակցությունները, այլև ունենալ ավելի հավակնոտ, գենդերազգայուն և իրավահեն համաձայնագիր, որը չունի աղոտ ձևակերպումների, հիմնված չէ սոսկ խորհրդանշական և թույլ փոխզիջումների վրա և անդրադառնում է պլաստիկի ամբողջ կենսացիկլին, այդ թվում՝ արտադրությանը, քիմիական անվտանգությանը, ինչպես նաև աշխարհում գոյություն ունեցող սոցիալական և գենդերային անհավասարություններին:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Հայնրիխ Բյոլ հիմնադրամ

- «Պլաստիկի քարտեզագիրք: Փաստեր և թվեր սինթետիկ պոլիմերների աշխարհի մասին», 2019: https://www.boell.de/en/plasticatlas
- Երիտասարդական հրատարակության կայք. «Առանց փաթեթի: Պլաստիկը, թափոնները և ես», 2021: https://plastic.boell.org
- Փաստաթղթեր: «Ֆեմինիստական տեսակետներ գլոբալ բնապահպանական արդարության վերաբերյալ»: https://www.boell.de/en/feminist-perspectives-on-global-environmental-justice
- Տեղեկատվական հարթակ: https://infohub-plastic.org/en
- Ֆեմինիզմի և գենդերային ժողովրդավարության գլոբալ բաժին: https://www.instagram.com/reel/C2ehZTstHLb/?utm_source=ig_web_copy_link

Հասարակական կազմակերպություններ (հետազոտություններ, հետաքննություններ, ծրագրեր)

- «Պլաստիկից դուրս» դաշինք: https://exit-plastik.de/runder-tisch-26/
- «Աջակցություն բնապահպանական և առողջապահական արդարությանը» ՀԿ (HEJ-Support): https://hej-support.org/women-and-chemicals/
- Թափոն հավաքողների միջազգային դաշինք: https://globalrec.org/tag/women-waste-pickers/
- «Վերահիմաստավորել պլաստիկը» դաշինք: https://rethinkplasticalliance.eu/news/the-movement-towards-a-global-treaty-on-plastic/
- «Կանայք հանուն ապագայի» (WECF), 2017. «Պլաստիկը, գենդերը և շրջակա միջավայրը»: https://www.boell.de/sites/default/files/2022-02/plastics-gender-environment.pdf
- «Կանայք հանուն ապագայի» (WECF) և «Կանանց բնապահպանական ցանց» (WEN) , 2021. «Գենդերային առումով արդարացի քաղաքականություն քիմիական նյութերի ոլորտում»: https://www.wen.org.uk/wp-content/uploads/Gender-Just-Chemicals-Policy-WECF-and-Wen.pdf
- «Կանայք հանուն ապագայի» (WECF), 2023. «Պլաստիկի ճգնաժամը և պլաստիկով աղտոտման միջազգային համաձայնագիրը գենդերային համատեքստում»: https://www.wecf.org/de/gender-dimensions-in-the-plastic-crisis-and-a-global-plastic-treaty/
- ·«Կանայք ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում» ՀԿ (WIEGO). «Թափոն հավաքողների ինքնակազմակերպման մասին»: https://www.wiego.org/waste-gender-rethinking-relations-empowerment

Միջազգային կազմակերպություններ և կառույցներ

- Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ). «Տնային աշխատողներ»: https://www.ilo.org/topics-and-sectors/domestic-workers
- Վերականգնվող էներգիայի միջազգային գործակալություն, 2025. «Վերականգնվող էներգիա. գենդերային տեսանկյունը»: https://www.irena.org/-/media/Files/IRENA/Agency/Publication/2025/Oct/IRENA_SOC_Renewable_energy_gender_perspective_2Ed_2025.pdf
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ), 2025. «Պլաստիկ թափոնների և ջարդոնի առևտրի մշտադիտարկում»: https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2025/05/monitoring-trade-in-plastic-waste-and-scrap-2025_5903e6d9/3ac3688c-en.pdf
- ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի մասին ծրագիր/Պլաստիկով աղտոտման հարցերով միջկառավարական կոմիտե: https://www.unep.org/inc-plastic-pollution
- ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի մասին ծրագիր. Քիմիական նյութերի գլոբալ շրջանակային ծրագիր (2023): https://www.unep.org/resources/report/global-framework-chemicals
- ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ասամբլեայի 7-րդ նստաշրջան. խորագիր՝ «Կայուն լուծումների առաջմղում՝ հանուն դիմակայուն մոլորակի»: https://www.unep.org/environmentassembly/unea7/theme
- Համաշխարհային տնտեսական ֆորում/ Պլաստիկի դեմ գործողությունների գլոբալ գործընկերություն, 2021: «Ուղեցույց պլաստիկով աղտոտման դեմ գենդերազգայուն գործողությունների վերաբերյալ»: https://pacecircular.org/sites/default/files/2021-05/GPAP-Global-Gender-Guidance-May-2021.pdf
- Համաշխարհային տնտեսական ֆորում. «Գանայի և շրջանաձև տնտեսության օրինակի ուսումնասիրություն»: https://www.weforum.org/agenda/2021/05/gender-women-plastics-ghana/

Ակադեմիական և տեխնիկական գրականություն

- Complexities of the global plastics supply chain revealed in a trade-linked material flow analysis, Communications Earth & Environment [«Պլաստիկի համաշխարհային մատակարարման շղթայի դժվարությունները՝ ի հայտ բերված առևտրով պայմանավորված նյութերի հոսքի վերլուծությամբ»]: https://www.nature.com/articles/s43247-025-02169-5
- Detection of microplastics in human tissues and organs: A scoping review [«Միկրոպլաստիկի հայտնաբերումը մարդու հյուսվածքներում և օրգաններում. շրջանակային տեսություն»]: https://pmc.ncbi.nlm.nih.gov/articles/PMC11342020/
- Geyer, R. et al., 2024: Pathways to reduce global plastic waste mismanagement and greenhouse gas emissions by 2050, Science 386(6726), 1168–1173 [Գեյեր, Ռ. և մյուսներ, 2024. «Աշխարհում պլաստիկ թափոնների թերի կառավարման ազդեցությունը և ջերմոցային գազերի արտանետումները մինչև 2050 թվականը նվազեցնելու ուղիները»]: https://www.science.org/doi/10.1126/science.adr3837
- «Տեքստիլ էքսչեյնջ» ՀԿ. «Նյութերի շուկայի մասին զեկույց», 2024: https://textileexchange.org/knowledge-center/reports/materials-market-report-2024/

Այս փաստաթուղթը գլխավորապես հիմնված է տվյալ ցանկում և ծանոթագրություններում նշված աղբյուրների տվյալների և եզրակացությունների, ինչպես նաև գերմանական «Պլաստիկից դուրս» դաշինքի տեղեկագրերի վրա: Այս վերանայված տարբերակում լրացուցիչ հղումներ են կատարվել պլաստիկի արտադրության, առևտրի, գենդերային ազդեցության, քիմիական նյութերի կառավարման, համաձայնագրի շուրջ բանակցությունների և իրավահեն մոտեցումների վերաբերյալ վերջին հրապարակումներին, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Վերականգնվող էներգիայի միջազգային գործակալության, Աշխատանքի միջազգային կազմակերպության, «Տեքստիլ Էքսչեյջ» և «Կանայք հանուն ապագայի» ՀԿ-ների և այս խնդիրներով զբաղվող այլ կառույցների զեկույցներին: Հատուկ երախտագիտություն ենք հայտնում Ռոլանդ Գեյերին (անկախ հետազոտող) և Ալեքս Քեյթերբոուին («Աջակցություն բնապահպանական և առողջապահական արդարությանը» ՀԿ) իրենց ունեցած ներդրման համար:

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Այս փաստաթուղթն առաջին անգամ հրատարակվել է 2023 թվականի փետրվարին Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Ֆեմինիզմի և գենդերային ժողովրդավարության գլոբալ բաժնի կողմից: Սույն վերանայված տարբերակը հրատարակվել է Հիմնադրամի Միջազգային բնապահպանական քաղաքականության բաժնի կողմից՝ Քրիստին Ֆունկեի համակարգմամբ:

Հետազոտությունը և տեքստը՝ Բիրտե Ռոդենբերգի

Հայեցակարգը՝ Բիրտե Ռոդենբերգի և Յանա Պրոզինգերի

Ձևավորումը՝ Մայա Իլիչի

Սույն աշխատանքը հրապարակված է Creative Commons Attribution-ShareAlike 4.0 International (CC BY-SA 4.0 DE) արտոնագրի պայմաններով, որի մանրամասներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://creativecommons.org/licenses/by-sa/4.0/legalcode: